

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Թր.

Վեցամսեայ 6 Թր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 Թր.

Վեցամսեայ . . . 7 Թր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iraounek“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравуник“

ВАРНА

Գրոշրոշիւք եւս չեն
տրոշիր

ՌՈՒՍ ԾԱՅՐԱՅԵՂՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Մեր նախորդ թիւի «Ժայռա-
յեղները» յօդուածով ցոյց տո-
ւինք թէ Կովկասի մէջ թէ՛ ռուս
ժայռայեղ յետադիմականները և
թէ ռուս ընկերվարականները
հաւասարապէս հայութեան բա-
րեկամներ չեն. յետադիմական-
ները՝ խուլիգանները ու թուր-
քերը թելադրեցին հայերը ջար-
դելու. եղբայրութիւն կեղծող
(այլեւ այս բառը կարելի է գոր-
ծածել) ռուս ընկերվարականնե-
րը ոչ թէ միայն իրենց «հայ եղ-
բայրը» ազատել կամ անոր օգ-
նել չը փութացին, այլ և իրենց
օւկաններուն մէջ չը քաջուեցան
գրել թէ «խուլիգանական հեղի-
նակները հայերն են և ասոնք
ազգայնական ձգտումներ ունե-
նալու համար կառավարութեան
հայահալած «գաղթիքը» առաջ
կ'երթայ, և բանուորական խոշոր
խումբեր անգործութենէ և սո-
վէ ճնշուած ըլլալով, յանցաւորը
կը փնտռեն և մօտը գտնուող
հայերը կը գտնեն» խօսքեր ո-
րոնք կիրքերու բորբոքման օ-
րերուն ուղղակի «հայերը մի
պաշտպանէք այլ հալածեցէք» ը-
սելու իմաստը եւ ուժը ունին :

Այլեւս պէտք է համոզուած ըլ-
լան մեր կարգ մը ընկերվարա-
կանները ու յեղափոխականները
նաեւ պահպանողական կամ յե-
տադիմական հարուստ դասը, թէ
Ռուսիոյ երկու ժայռայեղ կուսակ-
ցութիւններէն — յետադիմական
և ընկերվարական — հայերու բա-
րեկարելիչէ սպասել այլ ընդհա-
կառակը չարիքը միշտ պատրաստ
է հայ մնալ ուղեւնու համար :
Այսինքն թէ՛ ռուս ընկեր-
վարականը և թէ՛ յետադիմա-
կանը հաւասարապէս կը պահան-
ջեն որ մենք ազգայնականու-
թիւնը (հայութիւնը) ձգենք :

Անգամ մը ռուս ընկերվարա-
կաններու և հոգւոյն պատկերը
այս կերպով պարզուելէ վերջ ,

մեզ ի մասնաւորի Կովկասահայոց,
կը մնայ ինքնափոխադր խորհիլ
և ճշդել այն ուղին որ մեզ կը
խոստանայ Հայոթեան պահպա-
նումը ու զարգացումը :

Այսօր ռուս պետութիւնը հիմ-
նական բարեշրջման կ'ենթարկո-
ւի. ցարդ տիրող յետադիմական
կառավարութիւնը մեր դպրոց-
ները, մեր լեզուն ու մեր եկե-
ղեցին մեղմէ խել աշխատեցաւ
և մենք իրաւամբ հակառակե-
ցանք անոր : Հիմակ Սահմանա-
դրական դրութիւն մըն է որ
պիտի հաստատուի ընդհանուր
Ռուսիոյ ազատական մեծամաս-
նութեան համակրանքովը, և ա-
սոր կը հակառակին ժայռայեղ-
ները, գլխաւորապէս ընկերվա-
րականները՝ որոնց հոգւոյն
պատկերը ահա առաջին օրէն
մեզ յայտնուեցաւ, թէ կուզեն
որ հայերը իրենց ազգայնու-
թիւնը ձգեն, և մենք մեր ազ-
գային գոյութեան սպառնացող
երկու ժայռայեղ կողմերէն պէտք
է խորհինք գրկենք միջինը որ
Սահմանադրական դրութիւնն է
որ կուտայ ասկէ յետոյ Ռուսիոյ
բոլոր հպատակ ժողովուրդներուն
ապահովութիւն կեանքի, ինչքի
և ազատութիւն ինքնազարգա-
ցումի :

Ուստի Կովկասահայութիւնը ա-
ժըմ պէտք է ձգէ կուսակցական
ամէն նկատում և ուժ տայ Սահ-
մանադրութեան գործադրման
ցանկացող ազատական Ռուսիոյ,
և իր երեսը դարձնէ այլ ևս այն
ընկերվարական և յեղափոխա-
կան խմբակներէն որոնք գեւ-
դործի գլուխ չանցած մեզ յան-
ցանք կը վերագրեն մեր հայ
մնալ ուղեւը և այս պատճառաւ
կը չքմեղեն իրենց օւկաննե-
րուն մէջ իսկ ռուս գործաւորներու
մասնակցութեամբ կատարուող
հայկական ջարդերը :



ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՓԵՐԸ

ՊԱՌՈՒ ԷՆ ԿԸ տեղեկացնեն թէ
վերջին դէպքին Հայ սպաննուած-
ներու, այբուածներու և վիրաւոր-
ներու թիւը 236 հոգի հաշուած է.
այբուած են 49 տուն և բազմաթիւ
խանութներ : Ներթական վնասները
կը հասնին քանի մը տասնեակ
միլիոնի :

Վայրենի «հայրենասէրներու» թա-
փօրը երբ մօտեցած է ընդհ. նա-
հանգագետի բնակարանին, հայ պա-
տանի մը օտարափառ փախած ծովը
նետուած է, և չը խեղդուելու
համար մակոյկէ մը բռնած է : «Հայ-
րենասէրները» այդ պատանին փախ-
չիլը անսնելով քանի մը հարիւր
հոգի վազած են անոր ետեւէն, և ըս-
կըսած են ծովը բռնէ՛ք զնոյններ
արձակել, մինչեւ խեղճ հայ պատա-
նին ծովին յատակը իջնելը :

Տէր Յովհաննէսեանի տունը հըր-
դեհուելու ատեն, հին բնակողները
հինգերորդ յարկէն վար նետուած
են իրենց զաւակներով որ չայրուին,
բայց վար ինող ու զեռ ողջ մնա-
ցողները «հայրենասէրներէն» տեղւոյն
վրայ սպաննուած են, և ևս այս ոս-
տիկանապետ ժգենտու ներկայու-
թեանը :

Նոյն թղթակիցը կաւեցնէ

Բայելովի մէջ խուժանը ռուսի մը
տան վրայ յարձակած է, ներսը
գտնուող հայերը սպաննելու համար.
տանտէրը թող չէ առած, բայց ին-
քն ու իր ընտանիքն այլ զոհուած
են և տունը կրակի տրուած :

Այս անդթութիւնները տեսնելով
միջամտած են ծովային զինուորնե-
րը, բայց ասոնց այդ մարդասիրու-
թեան իբր հատուցում, զէնքերնին առ-
նուեցան և այժմ իրենք պատասխանա-
տուութեան ենթարկուած են :

Շամախու թիւին Առաջնորդը
Պագուէն հետեւեալը հեռագրած է
հոկտ. 27-ին Վեն. կաթողիկոսին :
«Տեղեկացնում եմ Ձերդ Սրբութեան,
որ իբր թէ Միրզաբէկեանցի անից
հայերը հրացանաձգութեամբ յարու-
ցին անկարգութիւններ շինովի է :
Միրզաբէկեանցիներն արտասահմա-
նումն են, նրանց բնակարանն ան-
բնակ է. միւս կարաններում բնակ-
ւում էին՝ պարօնից օսանմանի կոմի-
սար Ջորջաձէ, գաւառու Օրլով, ան-
գրիացի Գնուզէն, որոնք Միրզաբէկ-

եանցի պատգամից նախած էին թա-
փօրին, ինչպէս Ջորջաձէի աղջկաները
կը վկայեն, որ հրացանաձգութեան
մասին եղած տեղեկութիւնը սուտ է»

..

Հին Նախիջևանի կոտորածին
ատեն իր խանութին մէջ սպաննու-
ած ծանօթ վաճառական Տ. Կարա-
պետ Աղամեանի այրի կինը Մերա-
կուտին բողբոջած է Երեւանի նահա-
գապետի և ասոր օգնականին դէմ
և վնաս կը պահանջէ մօտաւորա-
պէս 180,000 ռուպլի :

..

Պագուէի մէջ ձերբակալուել է թուրք
խուլիգաններու պարագլուխ Աչու-
րովը :

Օտեսայի Հրէից ջարդին ատենը
կովկասցի հայ ռուսաւորները մեծա-
մասամբ հայի՝ մեծ պաշտպանու-
թիւն ցոյց տուած են խաղաղ բը-
նակիներուն : Այդ առթիւ Օտեսայի
քաղաքացիները շնորհակալութեան
ուղեւր մատուցել են կովկասցի ու-
սանողներուն :

..

Սուլթան-բէկ գիւղացի հինգ հա-
յեր վեց ռուս զինուորներու հետ
Նախիջևանէն գիւղ դառնալու ա-
տեն կը պաշարուին 60 զինուած
թուրքերէ, որոնք հայերէն չորսը
կըսպանեն, մէկը կը փախչի իսկ
զինուորներուն հրացանները առնելով
թրքերը մօտակայ Փայիթ թուրք գիւղը
կը մտնեն :

..

Հարկւրամեայ մի հայ քահանայ եւ
չորս հայեր Նախիջևանէն գիւղ
դառնալու ատեն Սուստ գիւղի
թուրքերը զանոնք կը չըջապանեն
եւ կսկսին հրացանաձգութեան : Այս
վայրկեանին եւս անունով կաղ
հայ մը ետ մնացած ըլլալով, հեռու-
էն կը տեսնէ հայերու դրութիւնը
ու կը վազէ գիւղ օգնութիւն կան-
չելու : Գիւղացիք կերթան ու կը
պաշարեն Սուստ գիւղը եւ մարդ կը
զրկեն ոտակահաւապտիւն, սա Նախի-
ջևանէն կուգայ եւ կը պահանջէ
թուրքերէն գերի հայերը ու քա-
հանան : Թուրքերը զանոնք ազատ
կը թողուն, բայց հայերէն խլած
հրացաններէն միայն երկուքը կը
յանձնեն : Այդ հրացանները կրելու
համար իշխան Նաբոլէոն հայերուն
արտօնագիր տուած էր :

Այդ իշխանը այժմ արձակուրդով

Բարբզ կը գտնուի :

Տփղիսի 15-րդ . գնդին սպաները քննութեան սկսած են հոկտ. 22-ի ա-րիւնահեղ զէպքերը գիտնալու համար թէ պատճառը եւ թէ որոնք են յանցա-ւորները : Սպաներէն մէկ քանիները յանցաւոր կը համարեն հասարակու-թիւնը ըսելով որ սա էր որ իր գրգռիչ վարմունքով , քարեր նետելով եւ ատրճանակ պարտիով առաջ բե-րաւ այդ աղէտը : Ուրիշ սպաները բողոքեցին այդ մ գողտքիքին դէմ . ապացուցանելով թէ զորքը եւ հայրե-նաէրներու ցոյցին մաս աղցողները կատարելապէս անխտիր դրու թեան մէջ էին , եւ ոչ ոք անոնց ձեռք չը զպցուց : Առաջին յիմարդիոնի բախէն քարեր նետելը խուլիգաններու զէմ ինքնապաշտպանութեան համար էր : Երկուր վիճաբանութիւններէ յետոյ սպայից ժողովը յանձնախումբ մը ընտ-րեց որ վնասուածները եւ ականա-տեսները հարցուփորձ ընելով պարզ է եղելութեան պատճառը :

Գանձակի առաջնորդական տե-ղապահ Տ. Կորիւն վարդապետ նոյեմ. 5-ին Տփղիս հասած է . բողոքելու հա-մար փոխարքային այն անտանելի դը-րութեան դէմ զոր ստեղծած է զօրա-վար Տակալչիլիին Գանձակ եւ Զրնա-շիր գաւառներու հայերուն համար : Վարդապետը իր հետ բերեւ է բազմա-թիւ փաստեր հայերու դէմ զոր-ծուած անլուր բռնութեանց մասին :

ՊՕԼՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԺՕՒԻՍԻ, 14 ՀԱՅՅԵՐՈՒ ԵՒ
2 ՅՈՅՆԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
Աման Ռուսէն հեռագր. գոր-ծակալութիւնը հետեւեալը հա-ղորդեց .

ՊՕԼԻՍ, 26/13 նոյեմբ. 1904
Երևոյդ-Բէնդի գաւաղութեան եւ Աւստրիական հիւանդանոցին դէմ ծը-

ԲԱԳՈՒԻ ՀԱՍԻՍԱՄԱԿԱՆՆԵՐԸ

(Արտասպուած «Նոր-Դար» էն) (8)

2

[Շար. նախորդ թիւէն]

Թաղիւնն ազդեցութիւն ունի նա-եւ քաղաքային խորհրդի վճիռ-ներէ վրայ մուսուլման իրաւա-ստներէ մեծամասնութեան շնորհ-հիւ :

Նոյնպէս ինքնիշխան Թաղիւնի միահեծան կամքն էր գործում այս տարի գարնան , երբ մուսուլման պատգամաւորներ պիտի ուղարկուէ-ին , խնդրելու համար որ մուսուլ-մաններին հաւասար իրաւունքներ չնորոգեն :

Նոր ամենակարող ազդեցութեան չը-նորհին էր , որ Բագուի պատգամաւոր հանդիսացան շուշեցի Աղայեւը , թիֆլիսցի Թոփչիբաշեւը եւ ռուս-թըրքական փախստական Հօւսէյին գաղէն .

բագրուած տրամին դատավարութիւ-նը երէկ սկսաւ : Ամբաստանեալներն են Պեյճիքացի Ժողովը , 14 հայեր եւ 2 յոյներ : Ամբաստանագիրը կարգա-ցուելէ յետոյ , սկսուեցաւ տրամա-տանիսց հարցաքննութիւնը : Ժողիս յայտարարեց թէ ինք անիշխանութեան կուսակից է : Հասա թէ հայերու կը-րած տառապանքը մասին թերթերու տուած մանրամասնութիւնները կար-գալով որոշած էր Սուլթանի դէմ դաւաղութեան մը մասնակից ըլլալ , այն յոյսով որ ատով հայց տառա-պանքը կը մեղմանայ :

Դատավարութեան շարունակութիւ-նը յաջորդ եօթնակին ձգուեցաւ :

Թուրք թերթերը կը սկսին այսօր մանրամասնութիւններ տալ դատա-վարութեան մասին : Ամբաստանագի-րը կը հաստատէ թէ դաւաղութիւ-նը նպատակ ունէր ընդհանուր յե-ղափոխութիւն յառաջ բերել Պոստոյ եւ կայսրութեան ուրիշ քաղաքնե-րուն մէջ : Այս որոշումը տրուած էր , Պուլկարիոյ , Ժրնէվի եւ Տփղիսի հայ եւ պուլկար յեղափոխական զօմիթէի արտակարգ մեծ ժողովին մէջ , որ անցեալ տարի Սօֆիայի մէջ գումա-րուեցաւ եւ որուն մասնակցեցաւ նաեւ Բ. Ս. Արմէնիս թերթին խմբագիր Բիէն Գիյաւը : Այդ ժողովին վերջ Դոշակ լրագրին տպարանը ժրնէվ փո-խադրուեցաւ : Դոշակ թերթին հիմ-նադիր Քրիստափոր Միքայէլեան 1904-ի սեպտեմբերին Պոլիս հասած է Սամուէլ Յին կեղծ անուան տակ եւ ամիս մը կեցած է Պեյճիքացի Ժողիսին քով , որուն հետ երկու անգամ գացած է Սէլամըզի արարողութիւնը դիտելու , Յետոյ նա Լիբա Ռիբս եւ ուրիշներու հետ հիմնած է յեղափոխ. զօմիթէի մասնաճիւղ մը Միքայէլեան կողմի-կից էր Սուլթանին դէմ ռուս մը ար-ձակելու . ուստի Սօֆիա մեկնեցաւ այս գործին համար փորձեր ընելու : Նա հոն սպանուեցաւ ուրիշ յեղա-փոխականէ մը ռուսի մը Պայթու-մովը :

Յետոյ Լիբա Ռիբս որոշեց զփո-խային մեքլանս գործածել : Ժողիսը միլիոնիք էր կը պահէր եւ յեղափոխա-կանները իր տունը կընդունէր : Դըռ-նապաններէ եւ սպասաւորներէ բաղ-կացած զօմիթաներ կը դիւրացնէին

Մեր համայնական այս երրորդու-թիւնը նկատեց , որ Պետերբուրգում տրամադիր են Կովկասցիներին ամեն տեսակ զիջումներ անելու , ինչքան որ կարելի էր : Օգուտ քաղեցին այս բանից եւ լրագրի հրատարակելու ի-րաւունք խնդրեցին : Պետերբուրգում այդ իրաւունքը տուին , առանց նա-խապէս Կովկասի իշխանութեան կամ-քը հարցնելու :

Իսկին ճոր մուսուլման պատգամա-ւորները լրագրի հրատարակելու ի-րաւունք էին խնդրում , բնական էր որ նրանց Ռուսիային հաւատարիմ քաղաքացիներ պիտի համարէին , ինչպէս որ իսկապէս Ռուսիայում ապրող մուսուլմանների ճնշող մե-ծամասնութիւնը , եւ այդ իրաւունքը տուին նրանց առանց սովորական ձե-ւակառութիւնների :

Բայց ո՞վ կարող է կարծել , որ այդ պատգամաւորները ներկայացուցիչ են ոչ թէ բնակչութեան , այլ միմիայն մի միլիոնների . որի հետ միասին նը-րանք նպատակ են դրել Ռուսիա-յին հաւատարիմ բոլոր մուսուլման-ներին դարձնելու մեթաւոր արե-րելքի բոքներներ :

այս ձեռնարկը տարածելով Դոշակ թերթը : Աւստրո-Հունգարական հի-ւանդանոցի դռնապան Առաքելը կը պահէր միլիոնիթի մնացածը եւ ուրիշ զործիքները : Ամաստանագիրը կը պահանջէ գործադրութիւնը պատժա-կան օրէնքի 55 եւ 58 յօդուածներուն գլխաւոր ամբաստանեալներուն դէմ : Ըստ. դատախազը կըսէ իր ճառին մէջ թէ ամբաստանեալները անիշխանա-կաններ էին որոնք կուգէին օգը հանել զիսպանատուները , պանդանե-րը , պանդոկները , հանրային եւ անհատական հաստատութիւնները եւ ոճիւր եր գործել խաղաղելու համար թուրքիոյ էւ ուրիշ պետութեանց մի-ջեւ գոյութիւն ունեցող լաւ յարա-բերութիւնները :

Լրագրիները վաղը պիտի հրատարա-կեն դատավարութեան շարունակու-թիւնը :

ՎԱՐԴԱՆԵԱՆ ԿԱՂԱՅԻՆ ԵԼԱՄ (1)

Լուսաքերի մէջ կը կարդանք . Ունձեան Արիկ Էֆէնիսի սպան-նող վարդանեանը կախապան հան-ուել է Պոլիս նոյեմ. 2. հինգշաբթի , Ամերիկայի կառավարութիւնը օրի-նաւոր ճանչնալով Օսմանեան դա-տարանին վճիռը :

Օսմ. կառավարութիւնը այլ եւ այլ գործերու համար մեծածնծ զիջողու-թիւնները բրած Մեծ Հանրապետու-թեան ի միջի այլոց , որոշուել է Պոստոյ Ամերիկեան եւ Վօշինկիթի Օսմանեան զեպանութիւնները , ո-րոնք երկրորդ կարգի են , բարձրացը-նել առաջին կարգի զեպանութեան : Այս լուրը ուրիշ ո եւ է կողմէ չէ հաստատուած :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՐՄԻՂԸ

Միջազգային տորմիղի մը կա-տարելիք ցոյցի մասին երկու-ղի մէջ թերահաւատութիւն կը տիրէր : Դրեթէ ընդհանուր էր սա համոզումը թէ վերջին վայր-կեանին Պետութիւնք անհամա-ձայն պիտի գտնուէին Սուլթանի

Է .

Տեղական թերթերի բնթերցողները յիշում են այն աղմուկը , որ հանեց «Հայաթ» լրագրի ծրագիրը (տպուած է այդ լրագրի համարում) :

Ասում են , որ խալիֆ Էսմէն էր հրաման արձակել Ալէքսանդրիայի մա-տենադարանն այրելու , որպէսզի ո-չնչացրած լինի այն բոլոր գրեթէ թիւն-ները , որոնք գուրս են դուրանի շըր-ջանակից :

«Հայաթ»-ը , 13 գար յետոյ հաւա-տարիմ մնալով զէպի ջրպահում ազ-գերի գրեթէ թիւնները տաճած էօմեր-եան ատելութեան արձակեց մուսուլ-մանների առաջադիմութեան համար կատարելապէս սպանիչ յետադիմա-կան նշանաբանը . «Թալամից դուրս փրկութիւն չիկայ մեզ համար» :

Վերելը մենք տեսանք , որ «Հա-յաթ»-ը հրաժարուելով հրաժարում է եւ մասնութիւն է համարում , երբ ասում են , որ նա համալսական-ների օրգան է , որ նա յորդորում է Կովկասի եւ Պարսկաստանի մուսուլ-մաններին միանալ եւ մի պետու-թիւն կազմել թուրքաց սուլթանի

վեհապետական . իշխանութեան դէմ գործնականապէս ճնշում բա-նեցնելու . այս համոզումը աւե-լի կը զօրացնէր Գերման դես-պանին մինչեւ վերջին վայրկեա-նը խիստ բարեկամական վար-մունքը , դէպի Պալատը եւ Դու-ռը :

Տորմիղին Բիրէայի առջեւ հա-մախմբուելու եւ նոյն իսկ հոն-կէ դէպի Թուրքիոյ ջուրերը ճամբայ ելլելու լուրը բնաւ սարսափ չազդեց Սուլթանը շրո-ջապատողներուն . եւ իբր թէ պետութիւնները կատակի ելած ըլլային , Սուլթանն ալ իր կող-մէ տալոյց կաղանդի նուէրներ տալու պէս , խել մը մրգեղէններ ընծայ զրկեց միջազգային նա-ւատորմի սպաներուն ու զինուոր-ներուն , որոնք իբր թէ Պայրա-մի առթիւ Սուլթանին ձեռքը պագնել եկող փոքրիկների ըլլա-յին . կատարեալ խեղկատակու-թիւն մը :

Բայց կատակ կարծուածը յան-կարծ իրականութեան փոխուե-ցաւ , երբ իմացուեցաւ թէ մի-ջազգային տորմիղը Միտիլիի նա-ւահանգիստը մտած ու գրաւած է մաքսատունը , հեռագրատունը եւ ուրիշ կարեւոր կէտեր , ինչ-պէս նաեւ պաշարած է զօրանոցը , որուն մէջ թուրք զինուորները մուկերու պէս ներս րաշուած է բանտարկուած են , առանց փորձ մը ընելու ընդգլխութեան :

Միտիլիի կղզին գրաւելու այս լուրը հասնելուն Սուլթանը զիջու-մի ժամը եկած համարեց եւ մեծ Եպարգոսը զրկեց զեպաններուն հետ տեսակցելու ու խնդիրը ա-նուշ տեղը կապելու : Դեսպան-ներէն մէկ քանին «Ինք հոս չէ» ըսել սալով , մերժեցին իշպար-գոսին հետ տեսակցել , որով հա-կահարուած մը տուած եղան

գայտնի տակ , որ նա լարում է մուսուլմաններին քրիստոնեաների դէմ տեսադատի եւ Ռուսիայի դէմ մաս-նաւորապէս :

Բայց «Հայաթ»-ի բովանդակութիւ-նը կատարելապէս հակասում է այս հերքման :

Որպէս զի թարգմանութեան ճշտու-թեան կամ անճշտութեան մասին խօսակցութիւն չլինի , մենք այս ան-գամ մի կողմն ենք թողնում «Հա-յաթ»-ի տաճակալ յօդուածները եւ վերցնում ենք տեղական թերթերի մէջ ռուսերէն թարգմանուած Ահմէդ բէկ Աղայեւի մի յօդուածն Արաբի-այի ապստամբութեան մասին : Այդ յօդուածի թարգմանութեան ճշտու-թիւնն ընդունել են «Բառապի»-ն եւ «Հայաթ»-ն իրենց լուրիմբի :

Այդ յօդուածի մէջ Պ. Աղայեւը շան-թեր արձակել է արաբների դէմ այն քանի համար , որ նրանք ուզում են անշատուել թիւրքիայից եւ անկախ պետութիւն կազմել : Պնդելով որ քը-րիստոնեայ պետութիւններն եւս ի-րենց խաղաւանքներով Բալկանեան թերակղզում (պարզ ակնարկութիւն ռուս-աւստրիական միջամտութեան

Պուլթանին որ անգամ մը զեւս-
պտանները ունկնդրութեան չէր
ընդունած :

Իսկ վերջապէս յայտնեց թէ
խնդրոյ առարկայ եղող Մակեդո-
նիոյ ելեւտից հակակշիռը (գօն-
թիւ) սկզբամար կ'ընդունի սա-
պայմաններով որ Ա) այդ գործին
համար պետութիւններէ կարգու-
եւելիք պաշտօնեաները գօնթիւէն
չըսուին՝ այլ խորհրդականներ
անուանուին : Բ) Պաշտօնէից վը-
ճարելի ամսաթուականները Իրան
միջոցաւ վճարուին՝ ոչ թէ ուղ-
ղակի տեղէն :

Այսօր խնդիրը այս վիճակին
մէջն է. և կը կարծուի թէ գեւս-
պանները պիտի հաւանին առա-
ջին պայմանին, բայց երկրոր-
դին ոչ որովհետեւ պաշտօնեա-
ներ երբ իրենց ամսականները
Դուռնէն սպասեն, պարտաւորու-
ած կըլլան Իրան գործիքը դառ-
նալ և պետութիւններէ կար-
գուած օտար բարձր պաշտօնեա-
ներու հրահանգներուն չը հե-
տեւելլ : Հաւանական է որ այսօր
վաղը այս պայմանէն ալ վաղ
անցնի Պուլթանը և բոլորովին
ընդունի եւրոպական հակակշիռը
Մակեդոնիոյ երեք նահանգնե-
րու ելեւտութիւն վրայ և մի-
շաղկապին տարմիջը հաւանայ
ու ցրուի :

ՊԱԳՈՒԻ ՎԵՐՋԻՆ ԴԵՊԵՆԵՐԸ

ՊԱԳՈՒ, 25 հոկտ. — Նիկոլայեւսկա-
յա, Կրասնոկրաստովսկայա եւ Կոզլ-
քիչիւսկայա փողոցները կրակի ճա-
րակ դառնալուց, ամենը մարդկանց
ճակատները քրախնքով տառնուի
տարիներ ընթացքում ձեռք բեր-
ուած տնային իրեղենները կողոպ-
տուելուց եւ իրենց էլ սրի ու կրա-
կի բովից անցկացնելուց յետոյ,

մասին Մակեդոնիայի գործերում) աշ-
խատում են կործանել թրքական պե-
տութիւնը, Պ. Աղայեւն ասում է բա-
նասի : Եւրոպացիները գիտնում են
ամեն միջոցի, որպէս զի կործանեն
մեզ մեր իսկ ձեռքով : Մեր տգի-
տութիւնը եւ այն, որ մեր մէջ մի-
ութիւն եւ համերաշխութիւն չկայ,
անարկու զէնք են հանդիսանում նը-
րանց ձեռքին կործանելու համար
խալալի շէնքը :

Լոյսի պէս պարզ չէ՞ արդեօք, որ
Անմէդ-թէկ Աղայեւն իւր մտքի մէջ
իրեն քաղաքացի է համարում արդէն
թրքական մի պետութեան, որն ընդ-
գրկում է Երկրագնդի բոլոր մու-
սուլմաններին, եւ, իրեն աղպիսի
մի քաղաքացի, արհամարհուք է յայտ-
նում արքաներին, որ նրանք գտա-
ւանորէն ձգտում են անջատել
թրքերէն, պախարակում է միւս
բոլոր մուսուլմաններին, որ նրանք
իրենց տգիտութեան շնորհիւ ան-
տարբեր են զէպի ընդհանուր մահ-
մետական թուրք պետութեան վրձա-
կը, եւ ատելութիւն է արտայայտում
զէպի այն պետութիւնները, որոնք
ուղղակի կամ կողմնակի կերպով
սպառնում են թրքերէն անկախու-

վերջապէս ընդհ. նահանգապետ Ժա-
գիէն, ամսիս 22-ին, պաշտօնա-
պէս յայտարարութիւն տուեց հե-
տեւեալ բովանդակութեամբ՝ «Ոչ ոք
եւ ոչ մի զորջակով իրաւունք չունի
փողոցներում հաւաքուիլ, քաղաք
կազմել, հակառակ դեպքում զինուո-
րակաւ ոչոք պիտի գործադրենք . . . »

Քաղաքացիները հաւատ ընծայեցին,
խանութիւնների մի մասը բացուեց,
փողոցները կեանքը վերականգնեց :
Բայց ճաշի ժամին քաղաք լուր հա-
սաւ, թէ Բայրութում եւ Բիրի-Հէյ-
րաթում հայերին կտորուտ, տներն
այրում ու կողոպտում են : Լուրը
ճշտուեց, իրանու թիւերը նորից փակ-
ուեցին : Ոչ մի մարդ փողոցում
Առաջիկայ Բիրի-Հէյրաթից մանրամասն
տեղեկութիւններ չունեմ, բայց ճշ-
տուած է, որ Բայրութում սկսած
ծծկեր երեխայից մինչեւ 80 տա-
րեկան պառաւ կանանց էլ են կո-
տորել : Նազարեանցի տնից ազատ-
ուել է միայն 6 մարդ եւ մի երե-
խայ, որին զինուորները մի հրէյ
ընտանիքի պահ են տուել : Ազատ-
ուած 6 մարդիկ իրենց կեանքով
պարտական են Սալթանեան գնդի
օֆիցէրներին ու զինուորներին :

Հաստատ աղբիւրից ինձ յայտնեցին,
որ Նազարեանցի տունը կողոպտե-
լիս (նախ քան հրդեհելը), Սալթան-
եան գնդի տաշի բառալիւնի օֆի-
ցերները ձեռն է հասել կողոպտուած
իրերի մի մասը 2—3 հազար ռ. ոս-
կէ եւ արծաթէ իրեղեններ, 4—5
հազար ռ. էլ կանխիկ փող եւ վեց
ատրճանակ :

Ինձ ասոյցով չէ յայտնուել այդ
իրեղենների տէրի տեղը գտնել,
բայց գիտեմ, որ նրանք Բայրութից
ուղղակի ծովով, Մանթաշեանի ձոգե-
նաւով, գնացել են Սեւ քաղաք :
Նարեկի է նրանցից իմանալ, թէ բը-
նուած աղբիւրն ու փողն ո՞ւմ
անխափանութեւն է՝ Նազարեանցի
տանն ապրողներինը, թէ՞ յայտնեղ
Բիրի-Հէյրաթից ապաստան գտնող
ներերն : Լաւ կը լինէր, որ «Նոր-
Դար»-ի ընթերցողներն այդ մասին
հարց ու փորձ մէջ մտնէին ու մի
կերպ գտնէին այդ խեղճերին :

Քաղաքում Բայրութի եւ Բիրի-
Հէյրաթի կտորածը բացառութիւն
համարեցին, սակայն երանի թէ գը-

թեան ու ամբողջութեանը :

Որ այդ ատելութեան ամենից ա-
ռաջ ուղղուած է Ռուսիայի դէմ որ
հասկանալի է ինքն ըստ իր քեան :
Որովհետեւ ուրիշ ո՞վ էր, եթէ ոչ
Ռուսիան, որ երբեմն հզօր թիւր-
քերային զրեց իրանի մարդու ներկայ
վրձակի մէջ :

Եստ ցանկալի է, որ «Հայաստ»-ի
ընթերցողները երեսակայութիւնն այն-
քան վաղ չլինի, որքան նա խմբա-
գրինը, եւ չգրաւի նրանց զէպի սու-
լթանի ընդհանուր մահմեդական պե-
տութիւնը : Ապա թէ ոչ այդ ե-
րազը շատ թանկ կը նստի արեւոյշ
արեւելքին ընդհանրապէս եւ մեր
քաղաքացիները երկրին մասնաւորա-
պէս :

Անմէդ-թէկ Աղայեւի յօդուածից ա-
ռաջ բերած յիշեալ կտորի մէջ ա-
մեն բան կայ թէ՛ ձգտում, որ առ-
բողջ մուսուլմանները միանան եւ մի
պետութիւն կազմեն սուլթանի գալ-
ստնի տակ եւ թէ՛ թշնամութիւն զէ-
պի քաղաքակիրթ աշխարհն ընդհա-
նապէս, իսկ զէպի Ռուսիան առանձ-
նապէս : Մի խօսքով՝ ամեն բան, ին-
չից որ, ինչպէս տեսանք վերեւը, վը-
ճապէս հրաժարում է պ. Աղայեւը :
(Շարունակելի)

րանով վերջանար . . .
Հետեւեալ օրը, կիրակի, հոկտ.
23-ին, ճաշից յետոյ, ի զարմանս Պա-
գուի բնակիչներին, հայկական թա-
ղը մտաւ առաւ բոսնականերից եւ
թուրքերից կազմուած մի ահագին
աւազակ : Ժողովուրդը մնաց շուր-
ուած, մէկ կարողութիւն նահանգա-
պետի հրամանը, մէկ խուլիգաններին
էր նայում : Թափօրը հետեւեալ կեր-
պով էր կազմուած. առաջիկայ մի քա-
նի կազակներ, յետոյ 50—60 թուր-
քեր եւ ռուսներ, ձեռներին եռագոյն
զրուսակներ, Թագաւորի պաակները, եւ
զուռնա-գնդի անդամներ : Ապա 7—8
կառքեր, չորս կողմը հարկաւոր
ամբոյս, իսկ յետեւից 50—60 կա-
զակներ : Ինքնին կառքում մի թուր-
քի հետ փառաւորապէս բազմած
էր քաղաքին չորրորդ մասի տիտա-
հոյակ պրիստաւ ժգնտին, իսկ միւս
կառքերում թուրքեր եւ մի քանի
թաղային օստիկաններ : Կառքերի յե-
տեւում պարզ կերպով երեւում է-
ին զինու. շիշեր, որոնց կատարե-
ւելք գերը յետոյ տեսանք :

Հայկական թաղով ամբոյսն ան-
ցաւ զէպի կայարանը, ապա այնտե-
ղից քարձրացաւ. Ստանիսլաւսկայա
փողոցով զէպի Տելեֆոնայա փողո-
ցը : Հայերն ամեն տեղ, ամեն փո-
ղոցում դուրս էին դալիս, խուժը-
խուժը կանգնում, «ուռնա» ներով ճա-
նապարհում ու եռագոյն զրուսակներ
էին նուիրում կամ պատշգամբնե-
րից ցած դնում : Ստանիսլաւսկայա
եւ Բալախանսկայա փողոցների ան-
կիւնում թափօր քիչ կանգ առաւ.
պրիստաւն ալ ու ձախ նայեց թա-
փօրին հետեւում էին : Յանկարծ
ատրճանակի պայթում լսուեց, Կա-
զակներն սկսեցին գնդակի կարկուտ
թափել անկիւնի տան վրայ, որը մի
ահագին շէնք է եւ պատկանում է
Յովհաննէս-թէկեան ազգանունով մի
հայի : Կառքերից դուրս հանեցին
չիշերը, փշրեցին տան դռան եւ պա-
տահանների վրայ, վառեցին լուց-
կին . . . (չիշերի մէջ բնդին կար) :
Ոչ ոքի թող չտուին ոչ գոնեւրից,
ոչ էլ պատահաններից դուրս գալ :
«Կոտորել հայերին», բղաւում էին
թուրքերը, ռուսները, կազակները :
Մի հայ կին ծծկեր երեխան գրկին
փորձեց պատահանից իրեն զէպի
փողոց չպրտել : Եւ այդ կազակի զըն-
դակը ջրջուեց սրտին, ու կինը
վաղը ընկաւ : Սոֆրազ-թէկեան ազ-
գանունով մի փառապան մի թաշ-
կինակ լիքը ոսկիներով ձեռնի բը-
նած բարձրագաւ կտուր, որպէսզի
միւս կողմով ազատուի դարձեալ
կազակը գնդակահարեց, իսկ թաշկի-
նակը կողոպտուեց : Երբ նկատեցին
որ կտրից փախչողներ չկան, եւ
մի քանի չիշ էլ ջարդեցին այրուող
տան յետեւի կողմի տան դռան
վրայ, ապա մի այլ տան դռան վը-
րայ եւս, այնպէս որ չորս կողմը
վառեցին, որպէսզի ոչ ոք հնարա-
ւորութիւն չունենայ փողոց փախ-
չելու : Կազակներն ամբողջ թաղը
շղթայ էին կապել : Հերթը հասաւ
առաւ կաշիէի չորսպարկունի մեծ տան.
տանտէրը բողբոջ, պահանջեց, որ
իւր տունը չայրեն, որովհետեւ ին-
քը առաւ է : Այդ միջոցին պրիս-
տաւի հետ կառքում նստած թուր-
քը ցատկից կառքից եւ բարձրաձայն
ասաց. «Եթէ չես ուղղւում, որ տունդ
այրենք, դուրս հանիր բոլոր հայե-
րին : Նրանց պիտի կոտորենք » : Խեղճ
առաւ մարդը մնացել էր երկու կը-
րակի մէջ, մի կողմը փախ է, միւս

կողմը խիղճ. կամ ի՞նչպէս դուրս
հանէ մարդկանց եւ տայ դադան-
ները բերանը . . .

Կաշիեւի տան մի դուռն այրուած
էր արդէն, երբ հանգցրին, որպէսզի
հայերն դուրս հանեն : Այդպիսի մի
զրուսեան մէջ առաջ եկաւ Սալթան-
եան գնդի վրացի մի սպայ իւր
զինուորներով : Այդ աղատիչ հրեշտա-
կը հրամայեց դուրս գալ բոլոր
հայերին եւ խոստացաւ բոլորին էլ
ազատել : Նախ մի երեխայ ինքը գը-
կեց, ապա շրջապատելով դրանց զին-
ուորներով տարաւ ուսումնարանի
շէնքը : Ազնիւ սպան լսում էր կա-
զակների հայոյանքը, որ նա թող
չէ տալիս կտորել, բայց իրեն չի
լսող էր ձեռնադնում : Հարեւրից ա-
ւելի հոգիներ ազատեց մի ժամուայ
մէջ :

Այդ պահին այրուեցին չորս ահա-
գին շէնքեր, բայց այդ դեռ բաւա-
կան չէր. բերին թնդաւորները եւ
այրուող տներին կրք հարուած
տուին. ապա «հայրենասէրներին» թա-
փօրը շարժեց զէպի առաջ : Այ-
նուհետեւ նա կանգ առաւ, գիտէ՞ք
որտեղ — Հայոց Մարդ. Ընկ. «Պա-
սանդի առաջ, ուր բացառապէս ապ-
րում են 1894—95 եւ 96 թ. թ.
սահակաւն գազանութիւններից ազա-
նած սահակաները, ցնցոսիւնտի մեջ
փախարհում, թորիկ, վերին աստի-
ճանի պողոտայի կանաչ ու երեխաներ
եւ այդ ողորմելիները «քրիստոնեայ»
պետութիւն փախչելով ազատել են
կամեցել իրենց անբաղդ գլուխը :
Այդտեղն էլ վառեցին . . . Ականջ
պէտք էր լսելու ազգատների ա-
ղիողում ձայներն ու ճիշերը . . .
Նրանց մէջ կային կոյրեր, կաղեր եւ
այլ խեղանդամներ, որոնք փախչել
չէին կարողանում :

Համբերութեան բաժակը լցուեց . . .
Մի խումբ հայ երիտասարդներ զէն-
քի զիւններն ազատելու համար գո-
նէ կոյրերին եւ կաղերին : Այդ ե-
րիտասարդներին յաջողուեց ցրել
թագաւորի պաակներն ու զրոյակը չա-
հագործող սրկաններին, թողնելով
փողոցում իրենց արժանի գոհերը :
Մինչեւ այսօր էլ խանութները
փակ են. կեանքը մեռած, միութարա-
կան ոչինչ չկայ. աղիւն, ւնակ, կրակ,
հոտ եւ սուր քաւիկ կոյով :

Այդ օրն այրուածների, սպանու-
ւածների եւ վիրաւորուածների թիւը
40 ից մօտ է :

[ՆՈՐ-ԴԱՐ] ՓԱՐՈՍ

Ա. Զ. Դ.

Անոնք որ հայերէն որ եւ է գրքեր
ունեն եւ կուզեն ծախել, թող հաճին
գիտել Հայկական Ընթերցարանի վար-
չութեան որ եթէ յարմար տեսնէ պի-
տի գնէ գանոնք :

Վարչութիւն հայկ. ընթերցարանի
(ԿՆԻՔ)

Վառնա 12 նոյեմ. 1905

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«ԻՐԱՆԻԱՆԻՔ»-ի Վարչութիւնը
յոյժն կանգնեց տպագրել հրաւիրագրեր,
նամակազուրկներ, այլ եւ այլ քար-
տեր, հաշուեցանքներ, տոմարներ,
գրքոյկներ եւ այլն :

Ուրիշ քաղաքներէ ստացուած յանձ-
նարարութիւնք կը գործադրուին փու-
թով եւ մեծ խնամքով, Գինները չափա-
ւոր եւ գրամը կանխիկ :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Պէշնէտտիւզէլ տօնանմասը է- լան Միտիլին իլիմանընտա պէքլէմէքտէ օլտուն պէրիտէ, Սթանպօլտա, Սատրաղամ վէ խա- րիճիյէ նազըրը էլիլիլէրին գա- բուլարընը էլէ ալարագ, աման կէլին շու մէսէլէյի հալլ իթմէք իչիւն միւզէքէրէյէ կիրիշէլիմ տէյիւ եալլարմագտա տըրլար : Սուլթան Համիտ ատէթի գատի- մէսի իւզրէ, զօրը կէօրմէսինտէ եէլքէնլէրի էնտիրմիշ տիր :

Մաքէթոնիատա էճնէպի գօն- թըրօլընը շիմտի մէպտէն գա- պուլ իտէյօր, եալլընը գօնթրօլ իտէճէք օլան մէմուրլար պօնթ- րօլէօր թէմիլէյ օլընմասընլար, քէզա Մաքէթոնիատաքի մէ- մուրլարըն մաաշլարը էվլէլէի կիպի Պապը Ալի սանտըղընտան վէրիլսին կիպի պազը թէքլիթի- լէր իտէյօր իտէտէ՝ էլիլիլէրտէն գապուլ օլընմագ իտէպու թէք- լիթլէրտէն տախի վազ կէշուպ գօնթրօլս թէմամը իլէ հիւսնի ըրիզա կէօսթէրէճէք տիր :

Սթանպօլտան Աթան Պիլիպ- րըն պիտիրտիկի իւզրէ, Եըլ- տըզտա մուհարէպէ արզու իտէն պիր ֆըրգա պուլընարագ, պու ֆըրգա տէվլէթլէրին թէքլիթի- նի գապուլ իթմէյուպ մուհա- րէպէ հազըրլըղընա պագմագ իսթէր իմիշ :

—Սրանտարտըն հաղտըղը իւզրէ, Սուլթան ինտընա ըս- րար իտէր վէ տօնանմանըն պիր գաշ ատա գապթ իթմէսինէ է- հէմմիլէթ վէրմէք իսթէմէզ ի- սէ, Ալստրիա օրտուսընա Մաքէ- թոնիանըն իւշ վիլայէթլէրինի իշղալ իթմէք իչիւն տէվլէթլէր մէզոնիլէթ վէրմիշէր : Նաէ Ֆը- ռաէ Բաէաէ վիէննա կազէթասը չիմտիլէք պէօլլէ պիր մէզու- նիլէթ ալընմատըղընը եաղիյօր :

—Սէլանիք վէ Մանասթըր վիլայէթլէրինտէ ըուժ չէթա- լարըն կիթտիքճէ արթմագտա օլտըզլարը վէ պուլնար Պուլ- կար քէօլլէրինէ թէհտիտաթլը մէքթուպլար եարուպ, ըուժ բաթ- րիգհանէսինէ թապի օլմալա- րընը վէ պուլկար էքսարքընը թէքք իթմէլէրինի թալէպ իթ- տիլէրինի Սօֆիա կազէթալարը եաղիյօրլար :

—Ալպանիատա պիր գօմիսինը մախսուս թահրիլի նուֆուս (մար- դահամար) իթմէքտէ տիր : Ար- նալուտլար նուֆուսլարընը եաղ- տըրմագ իսթէմէյօրլար, պու սէ- պէպլէ Լուժա չէհրինտէ գօմի- սինա գարչը Արնալուտլար թէհ- տիտաթ կէօսթէրմիշէր վէ իշ ըսեան հալիլի քէսպ իթմիշ օլտըղընտան, գօմիսինը մէքքիւ- րըն մուհաֆազասը իչիւն Բրէզ-

րէնտէն Շէմսի բաշա խալլը աս- քէրլէ Լուժա կիթմէք իչիւն է- մըր ալմըշ տըր :

ԲՈՒՍԻԱ

Նոյեմ. 12 տէ Սէվաստաբօլտա պահրիէ ասքէրլէրի ըսեանա գալգարագ, գարա ասքէրլէրի- նին տախի պիր թագըմընը քէնտիլէրինէ պիրլէշտիրմիշէր, զապիթլէրի վէ ժէնէրալը թու- թուպ հապս իթմիշէր, սօնրա մուզիքա վէ նաղմէլէրլէ չէհրին սօգազլարընը կէզէրէք, իշճիլէրի վէ էհալիլին պիր գըսմը տախի քէնտիլէրինէ պէնտ իտուպ, պէ- յինլէրինտէ մուվազաթ հիւքիւ մէթ թէշքիլի իլէ չէհրին վէ էհալիլին մուհաֆազասը իչիւն նէօպէթճիլէր գօյմուշլար : Շէօյ- լէքի : ասը ասքէրլէր չէհրէ վէ գաղարմալարա նոյեմ. 12 տէն պէրու սահիպ օլմուշ օլմաղլէ, Գարատէնիլ տօնանմասընը սէր գօմանտանը վէ պէօլիկ զապիթ- լէրի գարաշա տալլէթլէ թա- լէպլէրինի իյղահ իթմէք իս- թէմիշէր, ֆագաթ գօմանտան ասքէրլէրին Եօլըզլըղընա պէ- յանը թէհսիւթ իթմիշ վէ կիթ- մէմիշ տիր : Պիր ընվալէթլէ կէօ- րէ Սէվաստաբօլ չէհրի թօրա թու- թուլմուշ : Պու սահիհ տէկիլ :

Մ. Վիթթէ Սէվաստաբօլտա աս- քէրլէրին ըսեանընը թէսքին իթմէք իչիւն թէլէկրաֆլա Ձէ- մըսթիւլարըն գօնիլէրէր իչիսինի թէվասուլթընը ընճա իթմիշ վէ տէմիշ տիր քի Սէվաստաբօլտա- քի ըսեան չիմտիլէ գատար օլան- լարտան չօդ միւտիշ տիր :

—Բէթէրսպուրկտա սիւքիւնէթ պաշլամը իքէն, Սէվաստաբօլտա- քի ըսեանըն խապէրի ալընմա- սընտա գարըղըլըք արթմըշ վէ իշճիլէր թէքքար թաթիլի մէշղուլլէթ իթմիշէր տիր :

—Մօսկուտա թէճէմմիւ օլը- նան Ձէմսթիւլարըն վէ պէլէտի- յէլէրին գօնիլէրէ սօն տէֆա Եա- հուտիլէրին գըրիլընընա գարչը բըրթէսթլէ՝ պիր տահա պէօլլէ գըրիլընլար վէ հիւճուլար վու- գու պուլմամագ իչիւն իթմիշա իտէն թէտպիրլէրին էլէ ալըն- մասընը արզու, վէ հոկտ. 17 մա- նիֆէսթին նէշքիլնտէն սօնրա 60 մահէլլէրտէ զուհուր իտէն գըր- կընլար գըսմէն հիւքիւմէթտէն թէրթիպ օլընմըշ օլմասընը իթ- թիֆագը արա իլէ թատիգ իթմիլէր :

Քէզա Եահուտիլէրին տիկէր թապալար կիպի միւտալի (հա- ւասար) հագլարը վէ սէլահի- յէթլէրի օլմատըղընա տալիր էհալիտէ օլան եանլը իտէա- նըն լաղլ ու պէրթարաֆ իտիւ- մէսի իչիւն տախի թէտպիրլէր էլէ ալընմասընը Գօնիլէր թալէպ իթմի :

Ձէմսթիւլար պու տէրէճէ Եա- հուտիլէրին հուգուգլարընը վը- գալէ իթտիքտէն սօնրա, Բօյօնէզ- լէրին [լէհ] մէսէլէսինի տախի թահթը միւզէքէրէյէ ալուպ, 8—10 սէսէ գարչը 167 սէսլէ Բօյօնիալա օթօնմի վէրիլմէսի նի գարարա ալտըլար :

Պիլ ախէրէ Գօնիլէր վէրտիկի գարարլարը վիւքէլա ընյիսի Մ. Վիթթէյէ թէֆիլմ վէ իյղահ իթմէք իչիւն պիր հէյէթի մու- րախաէ նասպ իթտի իշպու հէ- յէթ Բէթերսպուրկա կիտուպ Մ. Վիթթէյէ էմիլիլէթի թամմէ- սինի պէյանլէ պէրապէր տախի- լիլէ նազըրը Մ. Տուրնօլմըն աղ- լընը թալէպ էլլէյէճէք տիր :

ՄԻԻԹԷՆԷՎԻԻԷ

Թօքիտան Տէյլի թէլէկրաֆլըն տուլտուզը իւզրէ, ճաբօն օրտու- սընըն սըհիլէ (առողջապահա- կան) իտարէսինի թաստիգիլնէ նաղարէն, սօն ըուս-ճաբօն մու- հարէպէսինտէ ճաբօնլարըն թէ- լէֆիաթը 218,429 էօլիւ եախօտ եարէլի վէ 221,136 խասթա օլմուշ տըր :

—Ալմանիանըն Բալիշլթալը [մէճլիսի մէպուսան] թանթանալը սուրէթտէ նոյեմ. 15 տէ ալըլ- տի : Իմբէրաթօր Վիլհէլմ քիւշա- տը նուլթընտա թիճարէթ աշտ- նամէլէրին թանղիմիլնտէն պահս իտուպ, մալիլէ իսլահաթընը, տօնանմալը արթըրմագ ճէտ- վէլի վէ մալիլէ վէ սօսիալ գա- նուշլարը մէճլիսին թէտըզը- նա իհալէ օլընմաղընը պիւ- տիրտի : Իմբէրաթօր խաթիճտէն պահս իտէրէք Ալմանիանըն պիւ- թիւն տէվլէթլէր իլէ միւնասէ- պաթը տօսթանէտէ պուլընտըղը- նը վէ ըուս-ճաբօն միւսալէհասը իչիւն Մ. Բօլլէլլէ եարտըմ ի- տէպէլմիշ օլմասընտան տօյալը մէսրուրիլէթիլի պէյան իթտի : Մարօք գօնիլէրանը իչիւն Ֆրան- սա իլէ իթիլաֆ հուսուլա կէլ- միշ օլմասընտան պահս էյլէտի : Նիհայէթ՝ իմբէրաթօր՝ սուլհըն մուհաֆազասը քէնտիլնէ էն մուզատտէս վաղիֆէ ատտ իթ- տիկիլի, ֆագաթ վագթըն ահ- վալի : հագսըղ թէճալիլաթտան մէմալիքի սէնիլէնի մուհաֆա- զասը իչիւն գուվլէթլէրի ար- թըրմալա մէճպուր իթտիկիլի վէ պուտէ իթթիֆագը միւսէլլէ- սէնիլն թագվիլէսի տէմէք օլ- տըղընը պէյան էյլէտի :

—Գարատաղ հիւքիւմէթի տա- խի գանուըն էսասի (սահմանա- գրութիւն) ուսուլի իլէ պուլնտան սօնրա իտարէ օլընմագ տըր. 61 մէպուս ինթիլապ օլընմըշ տըր, ֆագաթ տահա բօլիթիգա բարթիլէրի թէշքիլ օլընմատը- լար :

—Պուլկարիանըն 1906 սէնէ- սինիլն հարպիլէ (պատերազմա-

կան) պիւտճէսինտէ ալթը մի- լիօն ֆր. մէսարիֆ արթաճագ տըր :

ԹԻԻՔՃԱՐԻՑԷ

ՎԱԻԵԱ, Նոյեմ. 19

ՋՍԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱԶ		
Վալիօն	54-60 լիպ.	10. / 11. 40
Արապա	52-62 լիպ.	9.80 / 11.60
ԱՐԲԱ,		
Վալիօն 100 քիւ		11.20 / 11. 50
Արապա	42-47 լիպ.	6.60 / 6.80
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լիպ.	5.20/5.30
Վալիօն 100 քիւ		11.80/11. 70
ՖԱՍՈՒԼԵԱ արապա	100 քիւ	25—29
ՌԱԲԻՑԱ	100	22. 23.
Արապա	100 քիւ	հօգ
ՏՍՐԸ տրապա		10/ 11
ՔՕԼՕՁ արապա	55-60 լիպ.	11./13.40
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	առապա	8. / 8.60
»	100 քիւ	11. 50- 11. 60
ՋՍՎՏԱՐ արապա		9. / 9.60
»	100 քիւ	13. / 13.50
Կիւնտէ	50-60 վալիօն վէ	2-300
արապա կէլմէքտէ	վալիօն մուամէ-	
լէսի նաթօլէնճ 20 ֆր.	արապա մու-	
ամէլէսի նաթօլէնճ 20.	20	

ՍՍՐՐԱՖԻՑԷ

նաթօլէնճ 20, 20 ֆրանք
Օսմ. լիբասը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա ընացարնտա	պագալիլէ	
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը,	ալթուն	
ֆրանք իլէ :		
ԳԱՀՎԷ		2.10/ 2.20
Շէֆէր նէմցէ		64
Շէֆէր քէսմէլ սանտըգ		32.50
Բիթինճ ճէնօվա չուվալը		42
» Ֆիլիպէ »		40
» Ինկիլիդ »		28. 50
Բիդօ »		49
ԿԱԶ Սանտըր		12-
Ձէթիլի եաղը քիւ		1.—1. 10
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ		25

ԹԵՅ ԹԵՅ ԹԵՅ

—o—

Ընտիր եւ հօտաւէտ գուտ չինա- կան թէյ գործածել ուզող փափ- կաճալակ յաճախողներ թող զիմն Տ. Հրատտ Երկանեանի խառնթը, Բրեսլաւսքա վողոց թիւ 24, Հայ- կական Ընթերցարանին կից, հաս պի- տի գաննն նաեւ ընտիր գուլպաներ, ֆանէլաներ եւ այլն :

Ձ Ե Մ Ե Ն

—o—

Գալիսէրի պատըրմասը թէրթիպի իլէ պատըրմա եաբանլարըն հէր հալ- տէ չէմէնէ իդթիգալար օլաճաղընտան, խարիս վէ թագէ չէմէն ալմագ իսթէ- յէլլէր Վառնատա Տ. Յ. Ճանկիւրեա- նա վէ Բուսճուգտա Տ. Ղուկաս Օզան- եանըն պագալ տիւքեանընա միւրա- ճաթ իթմէլի տիրէր :

Одговорникъ А. Курбетия-ъ
печатающа Д. Тодоровъ и С.не-Варна